

**ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ն. Ս.

Հումանիստ հոգեբան Ռոլո Բեյի խոսքը, ըստ որի՝ «նա, ով ցանկանում է, ավելին է անում, քան նա, ով կարող է»¹, ևս մեկ անգամ ընդգծում է այն միտքը, թե կյանքում հաջողության հասնելու առհավատյան սեփական ուժերի նկատմամբ հավատի առկայությունն է: Սակայն լինում է և այնպես, որ շրջապատող աշխարհը խոչընդոտում է անձի ինքնակատարելագործմանն ու ինքնահաստատմանը, ինքնուրույնության և նախաձեռնության դրսևորումներին: Մինչդեռ մարդկային բնույթի ճկունությամբ և ներուժի անսպառությամբ պայմանավորված՝ անհատին հնարավորություն է ընձեռվում մշտապես սնվելու արտաքին աշխարհի աջակցությունից, դրսևորելու նպատակահաստություն, ներհայելու սեփական անձնային կառույցները և բացահայտելու Ես-ի ուժը, որակը, ձգտելու աճի:

Սոցիալական աշխատանքը բնութագրում է այն օժանդակող մարդասիրական գործընթացները, որոնք օգնում են մարդկանց ձեռք բերել ազատություն՝ իրենց հնարավորությունների գիտակցման և իրականացման, աճի ու զարգացման համար: Իսկ մարդասիրությանն ուղղված գործողություններում մշտապես ծնվում են հոգևոր ուժեր, որոնք ունակ են բարերար ներգործություն թողնելու անձի բարոյական համոզմունքների վրա: Բարձրագույն արժեքին համահունչ կյանքի կառուցումը հրահրում է մարդկանց զգալ անսահման պատասխանատվություն այլ մարդկանց հետ փոխհարաբերություններում: Բարոյական է մարդը միայն այն դեպքում, երբ նա հպատակվում է յուրաքանչյուրին օգնելու ներքին մղմանը և խուսափում վնաս հասցնելուց: Երբ մեկ անհատի սուբյեկտիվ կամքն ազդում է մեկ այլ անհատի կյանքի բարօրության վրա, ապա այդ կամքը միաձուլվում է անվերջության հետ, որում յուրաքանչյուր կյանք եզակի է և հանդիսանում է բարձրագույն արժեքային չափում և մարմին: Այն նպաստում է էկզիստենցիալ վակուումի չեզոքացմանը և կյանքի լիարժեքության ձեռքբերմանը:

Ահավասիկ, սոցիալական աշխատանքը, լինելով հասարակության խիղճը, միտված է անձի բարոյահոգևոր զարգացմանն ու կատարելագործմանը սոցիումում, անձի և սոցիումի միջև ներդաշնակության հաստատմանն ու պահպանմանը: «Սոցիալական աշխատանքը կարիքավորին օգնություն ցուցաբերելով, վերջինիս սոցիալական կյանքում վերընդգրկման համար համարժեք հնտությունների ուսուցմանն ուղղորդելով, ըստ էության, կյանքը բարեկարգող, կատարելագործող, կյանքին շարունակականություն հաղորդող,

¹ Социальная работа, введение в профессиональную деятельность, М., 2005, с. 348.

նրա հետագա ու սկզբունքային լինելիությունը հաստատող, միով բանիվ կյանքի նկատմամբ կենարար ֆենոմեն է»²:

Ինչպես տեսնում ենք, սոցիալական աշխատանքի բնույթը որոշարկվում է ինքնակատարելագործման, ինքնագարգացման, ինքնահաստատման ու ինքնաճանաչման ֆենոմեններով:

Ինքնակատարելագործումը ինքնափոփոխման բարդ գործընթացն է ողջ կյանքի ընթացքում՝ սկսած պատանեկությունից: Այն կարող ենք բնորոշել որպես անձի՝ սեփական բնավորության բացասական որակների հաղթահարման կամ վերահսկման փորձ: Որպես կանոն, առողջ մարդը ցանկանում է խուսափել այն բացասական հույզերից ու կենսադրսնորումներից, որոնք ծագում են թյուր գաղափարների և արարքների հետևանքով:

Ինքնակատարելագործումն անբակտելիորեն կապված է ինքնաճանաչման, սեփական Ես-ի տիրույթներում սուզվելու գործընթացներին:

Ինքնաճանաչումն անձի կողմից սեփական Ես-ի, եզակիության, անկրկնելիության գիտակցումն է, որը սկզբնապես ուղեկցվում է նմանների ամբոխից և, ընդհանուր առմամբ, աշխարհից իր Ես-ի առանձնացմամբ: Անձը սեփական կյանքից իր գիտակցության էկրանին է երևան հանում արդեն իմաստավորված իրադարձություններն ու փաստերը: «Ինքնաճանաչումը ոչ միայն ինքնագարգացման և ինքնակատարելագործման պայմանն է, այլև գլխավոր գործոնը: Չէ՞ որ այն ուղի է դեպի սեփական անձը, ուղի իսկական մարդկային իմաստների և արժեքների կառուցումը, բարի կամքի, սեփական ճակատագրի արարումը, ուղի մարդկանց և ժողովուրդների փոխըմբռնմանը, համաշխարհային ինքնակազմակերպման ուղի՝ ոգեշնչված բարձր մարդասիրական իդեալներով»³:

Կարևորելով վերոնշյալը՝ փաստենք, որ սոցիալական աշխատանքի կիզակետում անձի՝ սեփական ներուժի, սեփական հնարավորությունների ճանաչման գործընթացն է, որն էլ շարժառիթականացնում է անձի էզոն՝ մղելով նրան խնդրալույծ գործողությունների: Այս առնչությամբ ինքնաճանաչումը սեփական անձի այնպիսի ընդունումն ու հենարանն է, որի շնորհիվ մարդն ընդունելի է իր դիտանկյունից՝ ցուցահանելով իր արժանիքներն ու ամրապնդելով դրանք իրական նվաճումներով, ինչը հնարավորություն է տալիս ներառվելու սոցիալական միջավայր և զբաղեցնելու հասարակության մեջ որոշակի բարոյական ու օրինական դիրք: Դրական է, երբ մարդն իր աճի, զարգացման նշյալ փուլում շրջապատողների աջակցությունն ու խրախուսանքն է ստանում, քանի որ, որպես կանոն, երիտասարդ հասակում նրա «Ես»-ը առավել խոցելի և զգայուն է, նրա համար ծայրահեղորեն կարևորվում է շրջապատող աշխարհի տեսակետը: Սակայն անխոհեմ է նաև մտածել, թե արտաքին աջակցությունն ու խրախուսանքն ուղեկցում են անձնային արժանիքներին միայն ինքնաբերաբար: Երբեմն նրանք

² Ջիջյան Ա., Քոչարյան Ռ., *Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և «քրիստոնեական կենսակերպի արմատավորումը»*, Ե., 2009, էջ 118:

³ Маслоу А. *Мотивация и личность*, СПб., 1999, с. 478.

ծնվում են՝ անկախ շրջապատի նախնական սահմանափակող դիրքորոշումների, և հենց զարգացող մարդու ջանքերի շնորհիվ, որը հաղթահարում է շրջապատի օտարումն ու անգամ անբարյացակամությունը:

Այնուհանդերձ, պատահում է, որ մարդը ձգտում է հայտնվել ուշադրության կենտրոնում, արժանանալ միջավայրի ընդունմանն ու ճանաչմանը՝ չամբասանելով նշյալ ցանկությունը որևէ կերպ: Նման վարքը խոսում է սեփական արժանապատվության թույլ զարգացածության կամ ձախողված զգացման մասին, որը սպառնալիքի տակ է դնում անձի հետագա զարգացումը, կատարելագործումը: Տվյալ դեպքում մենք գործ ունենք անհատի ճգնաժամային զարգացման հետ, որը վաղ թե ուշ պահանջելու է նահանջ սեփական Ես-ից, օտարում սեփական կենսակերպի կազմակերպման հայեցակարգից, առանց որի այն կարող է ավարտվել անձնային կառույցների ձևախեղմամբ, անհատի վճռական ձախողմամբ և, իհարկե, վերջինիս համապատասխան սոցիալական վնասվածքով:

Շարունակելով սոցիալական աշխատանքի նկատմամբ «ինքնակատարելագործման», «ինքնագարգացման» ֆենոմենների հիմնարարության քննությունը՝ նկատենք, որ սոցիալական աշխատանքը բխում է անձի փոխակերպման հնարավորության համոզմունքից. այն է՝ յուրաքանչյուր անհատ ձգտում է իր կենսական նպատակների իրացմանը՝ բացահայտելով, զարգացնելով և գործածելով իր ստեղծագործական կարողությունները: Սոցիալական աշխատանքի գերնպատակն է այնպիսի զարգացնող միջավայրի ապահովումը, որում անձը հնարավորություն կունենա իր ներուժը, այսինքն՝ ունակություններն ու հմտություններն իրացնել: Այդպիսով՝ ինքնակատարելագործումը շարժում չէ դեպի որևէ վերացական չափորոշիչ, որն անձն ընդունում է որպես իդեալ, կատարելություն: Ընդհակառակը, այն անհատականության զարգացումն է, վերջինիս մոտեցումը իր իսկությանը՝ սոցիալական և կենսաբանական պայմանների լույսի ներքո:

Սոցիալական աշխատանքը ելնում է միևնույն ժամանակ այն դրույթից, համաձայն որի՝ նախքան կյանքի ճանապարհորդությունն ձեռնարկելը, մարդը, հարկ է, որ սովորի իմաստուն և խելացի ընտրության, հարկ է, որ ընդունի աշխարհն ու իր անձն այնպիսին, ինչպիսին որ կան, բացահայտի իր ինքնությունը: Հարկ է սովորեցնել մարդուն գիտակցել ընտրության պատասխանատվությունն ու վտանգավորությունը, ընտելացնել նրան այն մտքին, որ վտանգն ու պատասխանատվությունը տվյալ դեպքում բնական են և հաջողության հակադարձ կողմն են և, ընդհանուր առմամբ, բանական կյանքի կարևորագույն մասն են կազմում: Ընտրել անվտանգը՝ նշանակում է մնալ հայտնի և ծանոթ վիճակում՝ միևնույն ժամանակ համարձակվելով դառնալ ծիծաղելի և հնացած: Ընտրել աճ՝ նշանակում է բացահայտել նորը, սեփական փորձին անծանոթը՝ միաժամանակ համարձակվելով հայտնվել անորոշության մեջ: «Անհնար է իմաստուն կերպով ընտրություն անել կյանքում, եթե կյանքի

յուրաքանչյուր պահի չես համարձակվում լսել ներքին ձայնիդ, սեփական ինքնությանը»⁴:

Ինքնակատարելագործման և այս առումով՝ նորին, անձանթին միտվածությունը կարող է պայմանավորել ուժեղ, խելացի, գիտակ դառնալու անհատի ձգտումը, համապատասխանել այն սոցիալական միջավայրի սպասումներին ու պահանջներին, որում կարողանում է դրսևորվել, ինքնիրացվել անհատը: Այնուհանդերձ, անձի զարգանալու խթանը երբեմն ստեղծում է խնդրահարույց իրավիճակ, որը կարելի է պայմանականորեն անվանել համապատասխանության, ինքնության ճգնաժամ: Ըզնաժամային նման իրավիճակում՝

• մարդը հայտնվում է սկզբունքորեն նոր սոցիալական միջավայրում, որը մարդուն հարկադրում է փոխվել ինքնաբեր կամ էլ գիտակցորեն որոշումներ ընդունել զարգացման նոր ուղղվածության ընտրության մասին: Զգալով նոր ուժին և կենսակերպին իր անհամապատասխանությունը՝ մարդը սկսում է վերահարմարվել և փոխվել, կառուցել հետաքրքրությունների, արժեքների և կանոնների նոր համակարգ: Որպես կանոն՝ ճգնաժամն ուղեկցվում է ընտրության լայնածավալ հնարավորություններով, սակայն միևնույն ժամանակ սեփական անձնային զարգացման համառ և կայուն աշխատանքով: Այսինքն՝ «ճգնաժամը» սուկ ինքնակատարելագործման առանցքն է, անկյունաքարը, այլ ոչ թե ձախողում կամ փակուղի: Չանքերը, վիշտը, հիասթափությունը, սխալ որոշումներն ու ձգտումները, ի վերջո, մոռացվում են սեփական որոնումների հետեվանքով բավարարվածության ընդհանուր զգացողության շնորհիվ: Անձի անհատական գիտակցականությունն ու վստահությունը անցնում են նոր մակարդակի, որը հնարավորություն է տալիս զբաղեցնելու նոր մշակութային կամ անգամ սոցիալական ապաստարան: Անձին հնարավորություն է ընձեռվում դրսևորելու սեփական ձեռնհասությունն ու բանիմացությունը նոր, իրեն հետաքրքրող կենսոլորտում:

• աշխարհի, այլ մարդկանց կուտակած փորձի և մշակույթի նկատմամբ ընկալունակությունը, հետաքրքրությունը օգնում են մարդուն ձեռք բերել կյանքում իր իդեալը: Որպես իդեալ կարող ենք նկատի ունենալ մշակույթի, գիտության, արվեստի կամ որևիցե այլ ոլորտի առանձին նշանավոր անհատականության կյանքն ու անձնային որակները: Ուժգին ձգտումը լինել այնպիսին, ինչպիսին որ իդեալն է, հարկադրում է մարդուն վերանայել իր վարքը, արժեքները, նպատակները՝ անկախ յուրաքանչյուր մարդուն հատուկ փոփոխությունից ու անորոշության վախից: Եվ եթե, այնուամենայնիվ, հաղթում է նոր փորձառություն ձեռք բերելու ցանկությունը, մարդը կատարելագործվում է: Հարկ է հիշատակել, որ դա հնարավոր է միայն տվյալ անհատի և նրա իդեալի, հոգեկան կառույցների խորքային համապատասխանության դեպքում: Միայն այս դեպքում է արտաքին

⁴ Психология личности. Хрестоматия, т. 1, Самара, 2008, с. 380.

հանգամանքների միանգամայն տարբերության պայմաններում հավասարեցումը հանգեցնում շոշափելի և ցանկալի արդյունքների:

Մարդուն ինքնակատարելագործման հրահրող գործոնների վե-րոնշյալ վերլուծությունը մատնանշում է, որ այստեղ գործառում են երկու փոխկապակցված պահեր՝ արտաքին միջավայրի և սեփական Ես-ի կողմից ներկայացվող նոր պահանջներին հարմարվելու անհրաժեշտությունը և նոր որոշումներ ընդունելու և միաժամանակ նախկին սովորական ու հարմարավետ կենսակերպը պահպանելու պատրաստվածությունը:

Վերոնշյալից եզրակացնենք, որ սոցիալական աշխատանքն այն գործընթացն է, որն օգնում է անձին ձգտել դեպի համապատասխանության առավել հասու, առողջ աստիճանի ու որակի, իրական ինքնության և իդեալական ինքնության տարբերակման, և որը նրան հնարավորություն կտա լինելու առավել լիարժեք, ամբողջական և ինքնահաստատված անձ:

Ինքնահաստատման շարժառիթը մշտապես անձին ուղեկցող ներքին մղումն է, սոցիումում «Ես»-ի հաստատման ձգտումը: Վերջինս կապված է սեփական արժանապատվության, ինքնասիրության, պատվախնդրության զգացումների հետ: Մարդը ջանում է ապացուցել շրջապատողներին, որ ինքն «ինչ-որ բան արժե», ձգտում է զբաղեցնել որոշակի կարգավիճակ հասարակության մեջ, ցանկանում է, որ իրեն հարգեն և արժևորեն⁵: Այսինքն՝ ինքնահաստատման ձրգտումը, սեփական անձի արժևորումը անձի գլխավոր շարժառիթային գործոններն են, որոնք հրահրում են մարդուն եռանդուն կերպով աշխատելու և զարգանալու: Եվ սոցիալական աշխատանքի խնդիրն է անձի ինքնահաստատման ուղիների խորքային ուսումնասիրությունն ու գնահատումը՝ բացահայտելու նշյալ ճանապարհին այն հնարավոր և հավանական խոտորումներն ու վրիպումները, որոնք ձևախեղում են անձի ինքնակատարելագործման ու ինքնագարգացման գործընթացները:

Ինքնակատարելագործման գործընթացը նկարագրելիս չենք կարող նկատի չունենալ զարգացում, աճ, փոփոխություն: Այսպես, ինքնագարգացումը ոչ միայն սեփական որոշակի որակների ու կարողությունների կիրառումն է ներքին և արտաքին կյանքում, այլև բացասականը հաղթահարելու ձգտումը՝ հենվելով դրականի, աճի վրա: Ինքնագարգացումը մարդու ընտրության ներքին ազատության դրսևորումն է, նրա նախաձեռնությունը՝ իր անձին ուղղված⁶: Տվյալ հասկացությունը միավորում է անձի կատարելագործման տարբեր տեսանկյունները:

Ինքնագարգացումը մարդասիրական սոցիալական աշխատանքի դիտանկյունից նշանակում է անձի կողմից միանշանակ շարժառիթականացում, որն է՝ որոշումներ ընդունելն ու իրականացնելը: Երբ իրականացված է անձի ինքնագարգացման ձգտումը, ուժգնանում և սրվում է ինքնակատարելագործման շարժառիթը:

⁵ Психология личности, с. 359.

⁶ Асмолов А. Г. Психология личности: принципы общепсихологического анализа, М., 1990, с. 223.

Ինքնակատարելագործման կարողությունը հատուկ է բոլորին, սակայն բացահայտվում է ոչ միշտ: Կատարելությունը ձեռք է բերվում ոչ բոլոր անձանց կողմից ոչ միայն այն պարզ պատճառով, որ կատարելությունը չի ճանաչում սահմաններ, այլև այն պատճառով, որ միջավայրը, կյանքի հանգամանքները կարող են շատ սահմանափակ հնարավորություններ տրամադրել, արգելքներ կառուցել ինքնաճանաչման և ինքնակատարելագործման ճանապարհին: Այնուհանդերձ, մենք այն համոզմանն ենք, որ յուրաքանչյուր մարդ ունակ է դրսևորելու բարձր բարոյական, կամային որակներ ամեն մի իրավիճակում:

Սոցիալական աշխատանքի դիտանկյունից մարդու համար կարևորագույնն ու դժվար հասանելի սեփական անձի և ներաշխարհի հետ արժանավոր, մարդկային և անվտանգ հարաբերություններ կառուցելու ունակության շարժառիթականացումն ու իրացումն են:

Մարդը չպետք է դառնա այն սկզբունքների գերին, ստրուկը, որոնք նա մշակել է իր համար կամ քաղել է ուրիշից: Անվտանգն ու մարդասիրականը սոցիալական գործառման, սոցիալական պատասխանատվության տեսանկյունից հետևյալ կանոնի պահպանումն է՝ «սկզբունքներն են մարդու համար, այլ ոչ թե մարդը՝ սկզբունքների»: Հարկ է տիրապետել թույլատրելի ճկունության և պահպանել ազատություն սեփական համոզմունքների նկատմամբ, հետևել սեփական փոփոխվող պահանջմունքներին, որպեսզի չորդեգրենք դոգմատիզմի, լճացման կամ էլ ինքնախարազանման ուղին, եթե հանկարծ նախատեսված կենսական ծրագրում որևէ բան չի հաջողվում իրագործել: Ճշմարիտը նաև այն է, որ դեռևս որևէ մեկին չի հաջողվել իրականացնել նախատեսվածն ամբողջությամբ: Մշտապես հնարավոր են անհաջողություններ և ձախողումներ: Հարկ է պատրաստված լինել և արհաբար սկսել ամեն ինչ նորից, եթե դա իմաստավոր է, կամ էլ որոշակի կենսական դաս քաղել վերապրածից: Սեփական անձի և սեփական փորձառության նման ընդունումն ինքնին իմաստություն է:

Սրան է հանգում մարդասիրական արժեքներով առաջնորդվող սոցիալական աշխատանքը, որն իր գործունեության վերջնանպատակ է դարձնում անհատի գորեղացումը՝ զինելով վերջինիս դժվարությունների հաղթահարման ուղիներով, ընդունակություններով, այսինքն՝ հնարավոր է դարձնում կյանքը ներսից կայունացնող և կայացնող ֆենոմենը:

Կյանքի և իմացական իմաստության ուղին եզակի է, անկրկնելի և հակասական: Մի կողմից՝ մենք շրջապատված ենք մարդկության բազմադարյան մշակութային փորձով, մյուս կողմից՝ էութենապես միայնակ ենք և դատապարտված ինքնուրույն կրելու սեփական կյանքի ընտրության բեռը մեր ուսերին: Ոչ ոք չի կարող անցնել մեր փոխարեն մեր ուղին, ինչպես և մենք չենք կարող կրկնել այլ մարդու կյանքը: Ահա այս առանցքի շուրջ էլ, ինչպես վերն ասվեց, կառուցվում է սոցիալական աշխատանքը՝ շեշտադրելով

հենց անձի ինքնորոշման իրավունքը, որն է սեփական զարգացման ուղին ինքնուրույն ընտրելու իրավունքը⁷:

Հաջորդ հարցը, բնականաբար, որ դիտարժան է այս աշխատության շրջանակում, անձի ինքնակատարելագործում և ինքնահաստատում հասկացությունների փոխհարաբերակցության խնդրակարգի որոշարկումն է: Արդյո՞ք այս հասկացությունները համարժեք են, և արդյո՞ք ձևական տրամաբանության տերմինաբանությամբ ասված՝ նրանց բովանդակություններն ու ծավալները համընկնում են: Կարելի է տեսնել նշյալ հասկացությունների փոխկապակցվածությունը և միևնույն ժամանակ նրանց տարբերությունները: Գլխավոր տարբերությունն այն է, որ ինքնակատարելագործումը միշտ անձի մեջ մարդկայինի, մարդասիրականի աճն է, բարոյական դրսևավորումներն են: Մինչդեռ ինքնահաստատումը կարող է իրականացվել նաև բարոյականության նորմերից նշանակալիորեն շեղման միջոցով: Իր գործունեության մեջ սոցիալական աշխատողը պետք է անձին մղի թե՛ ինքնահաստատման, ցածր ինքնագնահատականի, անլիարժեքության բարդույթի, մեղքի, անվստահության հաղթահարման և թե՛ ինքնակատարելագործման ու ինքնազարգացման:

Վերն ասվեց, որ ինքնահաստատումը նոր խմբին կամ փոփոխվող իրավիճակին հարմարվելու արդյունավետ եղանակ է, որը հիմնականում պայմանավորված է անձի որակներով ու հետաքրքրություններով: Վերջիններս էլ որոշիչ են ինքնահաստատման նպատակներն ու եղանակները սահմանելիս: Ինքնահաստատումը գլխավորապես կառուցվում է «հանդիսատեսի», արտաքին զնահատականի, արձագանքի և վերջինիս արագ յուրացման վրա: Այստեղ է նրա ինքնատիպությունը՝ որպես սոցիալական վարք, որը հիմնված է սոցիալական փոխանակման, սոցիալական համեմատության վրա: Խրախուսման ակնկալումը կարող է խեղաթուրել գործընթացը, փոխարկել այն կախվածության, համակերպման ֆենոմենների:

Կախվածության վերոնշյալ զգացումը՝ որպես զանգվածային գիտակցության երևույթ և վարքային կարծրատիպ, այսօր գերիշխող է մեր հասարակության մեջ: Հաճախ այն սեփական կյանքի սուբյեկտիվ ընկալումն է, որը համարժեք է անձի սոցիալական փորձին: Այս դեպքում հոգեբանորեն կախված մարդը փոխարկվում է «տառապող» մարդու, այն է՝ սոցիալական աշխատողի հավանական խորհրդանշան, որը արդի սոցիոմշակութային փոփոխությունների բացասական ազդեցության տիրույթում է՝ սոցիալական դերերի հերթափոխի, սոցիալական դերերի և սոցիալական կարգավիճակի անհամաձայնության, հին կողմնորոշումների կորստի, գաղափարական պարտավորության կորստի պայմաններում: Մարդկանց ներքին լարումը, բարոյա-նորմատիվային ապահարմարումը փոխակերպվում է անկառավարելիության, որն էլ, իր հերթին, գունավորում է ընդհանուր սոցիալական հարթությունը մութ երանգներով՝ վտանգելով անձի ինքնահաստատումն ու ինքնակատարելագործումը:

⁷ Тетерский Е. Социальная работа, М., 2004, с.126.

Սոցիալական աշխատանքի կարևորագույն խնդիրը հենց անձի սոցիալական դերերի ու սոցիալական կարգավիճակի համապատասխանության կամ անհամապատասխանության խորքային ուսումնասիրությունն ու գնահատումն է և համապատասխան հոգածության ու խնամածության դրսևորումը անձի ինքնահաստատման, վերընդգրկման գործընթացում:

Վերլուծական քննությամբ բացահայտվում է սոցիալական աշխատանքի՝ անձի ինքնակատարելագործումը, ինքնահաստատումը կողմնորոշող և ուղղորդող բնույթը: Սոցիալական աշխատանքը միտված է նրան, որ խորհրդատուի աշխարհընկալման հիմքում արմատավորվեն թե՛ ինքնուրույն հայացքներն ու գնահատականները, թե՛ առանց արգելքների մտածողությունը, առանց որի մարդն ապահովագրված չէ իր կամքի ու վարքի շահարկումներից: Մտային անկախությունը սոցիալական անվտանգության կարևորագույն բաղադրատարրն է:

Կողմնորոշված լինելով հասարակության մարդասիրական հիմքերին՝ սոցիալական աշխատանքը երաշխավորում է անձի ընտրության ազատությունը, պատասխանատու ազատությունը, մարդու և հասարակության փոխադարձ պատասխանատվությունը, անձ-հասարակություն-բնություն կառուցողական ներդաշնակ հարաբերությունները, յուրաքանչյուրիս սոցիալական պաշտպանվածությունը, կայունությունն ու կառավարելիությունը, մարդու ինքնարժևորումը, սոցիալական դաշտի բոլոր ոլորտներում անձի օտարման հաղթահարումը:

**САМОСОВЕРШЕНСТВОВАНИЕ И
САМОУТВЕРЖДЕНИЕ В КОНТЕКСТЕ СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ**

МЕЛКОНЯН Н. С.

Резюме

Гуманистическая социальная работа предполагает, что приоритетным для личности является реализация собственного потенциала.

Самосовершенствование – это сложный процесс самоизменения, саморазвития, самопознания. Самоутверждение есть стремление индивида к достижению и поддержанию определенного социального статуса. Способность к самосовершенствованию присуща всем, однако это качество раскрывается не в каждом, поскольку не только нет предела совершенству, но и социальная среда не способствует этому, осложняя также процесс самоутверждения.

Исходя из сказанного, социальная работа способствует нравственному и духовному развитию личности, гармонизации отношений между личностью и окружающей средой.

**SELF-IMPROVEMENT AND
SELF-AFFIRMATION IN THE CONTEXT OF SOCIAL WORK**

N. MELKONYAN

Abstract

Humanistic social work considers the realization of one's own potential to be a priority for the person. The present paper considers the peculiarities of self-improvement and self-affirmation in the context of social work.

Self-improvement is a complicated lifelong process of self-transformation, self-development and self-study. Self-affirmation is the individual's aspiration to achieve and maintain a certain social status.

The ability to self-improve is common to everyone. Not everyone, though, uses it in their full capacity, not only because perfection has no limits but also because society hinders self-affirmation.

In this regard, social work fosters moral and spiritual aspects of the human development, harmonising relationships between the person and the environment.